կաններդ, առհասարակ, ոչ մի տեսակէտ չունիք»:

— Պէտք չէ չափազանցել,— ասում է Սերգէյը՝ բակլաջանի մի կտոր ծամելով ու չիչը ձեռքին,— աւելի շուտ պէտք է ասել, որ մեր մտաւորականները սխալ տեսակէտի վրայ կանգնած են»:

Բաժակները լեցնում է եւ ասում.

— Մշուշապատ երազներով ապրող այս մարդիկ, անողոք իրականութեան առջեւ, բոյնը կորցրած թռչունի նման, շուարած փնտռում են, ի՞նչ են փնտռում՝ աստուածները գիտեն:

— Մենք վստահ ենք,— բացականչում է փոքրահասակ, կլորիկ, պետական թերթի խմբագիրը,— մենք վստահ ենք, որ ճշմարտութիւնը մեր կողմն է,— ու պարպում է իր կոնեակի բաժակը:

— Ճշմարտութիւնը կին է, բազմադէմք, բազմահոգի, եւ ամէն սիրահար կարծում է, որ իր սիրած կինը ամենագեղեցիկն է եւ ամենակատարեալը,— ասում եմ:

Նկարիչ Ս-ն կծկուած նստել է սեղանի ծայրին ու ինձ աչքով է անում, զգուշութիւն պատուիրելով:

— Աղբեր, ամենքս էլ համաձայն ենք,— ասում է ան մեղմ ձայնով,— այս երկիրը պէտք է շինել, քանդուած երկիրը պէտք է վերականգնել:

— Հարցը դրա մէջ չի, կարեւորը մօտեցումն է:

— Այո՛, այո՛, կարեւորը մօտեցումն է: Դո՛ւք ազգայնամոլ մտաւորականներդ,— եւ Յ-ն ձեռքը դնում է ուսիս վրայ,— դուք ներկայ դրութիւնը համարում էք իբր ժամանակաւոր:

— Իբրեւ ժամանակաւոր չարիք,— շուտ աւելցնում է խմբագիրը:

— Այո՛,— շարունակում է Յ-ն,— իբրեւ ժամանակաւոր չարիք, Զ-ն իրաւունք ունի: Ձեզ համար ներկայ դրութիւնը անցողակի մի երեւոյթ է. դուք շարունակում էք ապրել երազներով, դրսից օգնութեան էք սպասում, ծրագիրներ էք կազմում: Իսկ մենք, կապել ենք մեր բախտը միջազգային պրոլետարիատի հետ եւ մեր յոյսը յաղթական յեղափոխութեան հետ: Մեր աշխարհը մեծ է, մեր կարելիութիւնները՝ անսահման:

Գ-ն բարձրացնում է իր բաժակը լոյսի մօտ եւ նայում ճառագայթների խաղը գինու մէջ, յետոյ վար է դնում եւ քաղաքավարի ասում. .

— Ընկերները իրաւունք ունին. Եւրոպան մեզ խաբեց: Եւ ո՞վ մեզ չխաբեց: Վրացիները մեզ խաբեցին, Թրքերը խաբեցին, քրդերը խաբեցին, եւ ո՞վ գիտէ դեռ ինչքա՜ն մեզ պիտի խաբեն...

Զ-ն ծիծաղում է:

— Եղբայր, Զ-ն, խմբագիրը, ամէն օր մեզ խաբում է, յօդուածների համար փող է խոստանում եւ երկու ամիս սպասել է տալիս..

Ամենքը ծիծաղում են: Լռում են: Ս-ն սկըսում է մրմռալ: Մի քանի հոգի երգում են:

— Խմենք Սերգէյի կենացը:

Ա-ն փնտռում է. «Սերգէյը ո՞ւր է, մի քիչ առաջ այստեղ էր»: Սերգէյը ներս է մտնում ձեռքերը նոր չիչերով բեռնաւորուած: «Ուրրա՞»: «Սո՛ւսը, զգոյշ հարեւաններ կան»:

— Նիչէվօ,— ասում է Սերգէյը,— խմեցէք, քէֆ արէք»:

Դ-ն նստել է մօտս, բաժակը կպցնում է բաժակիս.

— Կ. Զարեան, ինչ որ էլ լինի, հայրենիքը անուշ է, այնպէս չէ՞: Մեր այս գինին, մեր այս ձուկը, համով եւ հոտով մեր այս մթնոլորտը, ո՞ւր կարող ես գտնել... Այնպէս չէ՞:

Բառերը դուրս է հանում սրտի խորքից, թոնիրից հանած տաք հացի նման, ձախ ձեռքով խաղում է մազերի հետ, իսկ աջով բաժակի հետ:

— Աղբեր, կեանքը դժուար ա: Գիտես էլի, հազիւ ծայրը ծայրին ենք հասցնում եւ, եթէ այս մոռացութեան րոպէները չլինէին, ծով էլ չկայ, որ նետուես:

Սենեակի միւս ծայրում Մ-ն վիճաբանում է: «Պատմական մատերիալիզմը ... դիալեկտիկան... տնտեսականը ամէն բանից առաջ»: Դ-ն նախադասութիւնները նետում է իր առջեւ փափուկ կարպետների նման եւ վստահ ու միամիտ ման է գալիս:

Դ-ն, փափսում է ականջիս.

— Օրինակի համար, վերցնենք, մութ մի փողոցում, սրածայր մի դանակով, մի մարդ

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան